



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

30 ՄԱՐՏԻ, 2016 թ.
№ 4 (989)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին երկշաբաթաբեր **•** հրատարակման 50 -րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան Կաթոլիկ համալսարանի պատմիչականությունը

Մարտի 23-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Շարագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանում ընդունեց Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան Կաթոլիկ համալսարանի ռեկտոր պրոֆ. Սուրոմի Սաբուչին, դասախոսներին և ուսանողներին ուղեկցությամբ Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր պրոֆ. Ռուբեն Միրզախանյանի:

Հանդիպումն սկսվեց միասնական Տերունական աղոթքով: Ապա տիար Ռ. Միրզախանյանը, ուրախություն հայտնելով հյուրերի՝ Մայր Աթոռ կատարած այցի առիթով, ներկայացրեց երկու կրթական հաստատությունների միջև ձևավորվող գործակցությունը: Նա մասնավորապես տեղեկացրեց, որ կնքվելու է համագործակցության պայմանագիր, որի համաձայն Հունգարիայում հիմնադրված 18-րդ դարի այդ կարևորագույն կրթական հաստատությունում ստեղծվելու է հայագիտական ամբիոն, իսկ առաջիկա տարիներին իրականացվելու են նաև դասախոսների և ուսանողների փոխանակման ծրագրեր:

Այնուհետև իր օրհնությունն ու հայրապետական պատգամը ներկաներին փոխանակեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Խանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունն ընդգծեց, որ հաճելի է համայն հայության հոգևոր կենտրոնում հյուրընկալել Կաթոլիկ համալսարանի ռեկտորին, դասախոսներին և ուսանողներին:

Անդրադառնալով պատմական աղբյուրներին՝ Վեհափառը փաստեց, որ այս գործակցային հարաբերությունները գալիս են նորոգելու այն ջերմ կապերը, որոնք դեռևս 10-րդ դարից ձևավորվել են երկու բարեկամ ժողովուրդների միջև: Նորին Սրբությունը խոսեց Հունգարիայի հայկական համայնքի ու հայ ժողովրդի կողմից այնտեղ կերտած կրթական ու մշակութային հաստատությունների մասին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Կաթոլիկ համալսարանի պատմիչ- > 2

ԿԲԱՑՎԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական և Հունգարիայի Պազմանի Պիտեր Կաթոլիկ համալսարանների միջև ստորագրվեց երկկողմանի համաձայնագիր, որը վավերացրին ռեկտորներ Ռուբեն Միրզախանյանը և Սուրոմի Սաբուչին: Համաձայնագիրը նպատակ ունի խթանել բուհերի համագործակցությունն ու ակադեմիական փոխանակումը:

Ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը կարևորեց Եվրոպայի ամենահին կրթօջախներից մեկի՝ Պազմանի համալսարանի հետ պայմանագրի ստորագրումը՝ ընդգծելով, որ այն 2013 թվականին արժանացել է ազգային գերազանցության կառավարական տիտղոսին:



Ռ. Միրզախանյանը ողջունեց Պազմանի համալսարանի ռեկտորին և ներկայացուցիչներին, նկատելով, որ մինչև համալսարան գալը Պազմանի և Մանկավարժական համալսարանների ուսանողներին և պրոֆեսորներին ընդունել և իր օրհնությունն է տվել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին 2-րդը:

«Մենք մեծ խորհուրդ և իմաստ ենք տեսնում, երբ մեր բուհերի միջև համաձայնագիրը ստորագրվում է Հռոմի պապի Հայաստան այցելության նախօրեին: Համաձայնագիրը ենթադրում է, որ Պազմանի համալսարանում պետք է հիմնադրվի հայագիտական ամբիոն. մենք խիստ կարևոր ենք այդ համագամանքը: Հուսով ենք համաձայնագիրը իր գործնական դրսևորումը կունենան. դասախոսների և ուսանողների փոխանակում, ինչպես նաև ժամանակի մեջ կուսումնասիրենք համատեղ մագիստրոսական ծրագրի իրականացումը», - ասաց ռեկտորը: Նա հավելեց, որ վերջերս բուհում հիմնադրվել է նաև հայագիտական լաբորատորիա՝ Ռուբեն Սաֆրաստյանի ղեկավարությամբ, որն առաջիկայում կվերածվի ինստիտուտի:

Հունգարիայի Պազմանի Պիտեր Կաթոլիկ համալսարանի ռեկտոր, պրո- > 2

Զննարկեցին կրթության ոլորտի հիմնախնդիրները

Մանկավարժական համալսարանում տեղի ունեցավ «Դպրոց-կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միության անդամ 110 դպրոց-կենտրոնների տնօրենների հանդիպումը ՀՀ ԿԳ նախարար Լևոն Սկրտչյանի հետ: Հանդիպմանը ներկա էին նաև Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը և պրոֆեսորդասախոսական կազմի ներկայացուցիչներ:

Ողջունելով ներկաներին՝ նախարարը նկատեց, որ հանդիպման նպատակը կրթության, մասնավորապես, հանրակրթության՝ որպես ամբողջական շրջային անխափան աշխատանքի ապահովումն է:

«Կրթությունն ունի երեք կողմ՝ ծնող, սովորող և ուսուցիչ: Այս եռանկյունին փոխընդհանուր է, և բոլոր կողմերը հետամուտ են նույն խնդրի լուծմանը: Հետևաբար, եթե դիտարկենք կրթությունը՝ որպես համախոհների ամբողջություն, ապա մտահոգությունը նույնը կլինի», - ասաց նախարարը: Նա նկատեց, որ այսօր ունենք միջազգային լավագույն չափորոշիչներ, բայց ի վերջո այս ամենը պետք է արվի հայկական տեսակի արմատավորմամբ:

Լևոն Սկրտչյանն անդրադարձավ նաև ավագ դպրոցներին և ընդգծեց. «Պետք է հստակեցնել ավագ դպրոցի առաքելությունը, որպեսզի այն չդառնա հիմնական դպրոցի մեխանիկական շարունակությունը, այլ կարողանա երեխային սովորողից դարձնել քաղաքացի, որոշում կայացնող: Ավագ դպրոցի չկայաց- > 2

Դեսպանի շրջայցը Մանկավարժական համալսարանում



Մանկավարժական համալսարանում հյուրընկալվել էր Հայաստանում Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Մաթիաս Քիլերը:

Այցի ընթացքում հյուրը եղավ բուհի թանգարանում, ծանոթացավ համալսարանի պատմությանն ու ժամանակագրությանը, եղավ նաև Շախմատի կրթական հետազոտությունների լաբորատորիայում, Ռադիո Ֆամայուն և գրադարանում:

Շրջայցից տպավորված՝ թանգարանի տպավորությունների գրքում դեսպանը գրառել էր. «Շնորհակալ եմ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՅ թանգարանում չափազանց հետաքրքիր շրջայցի համար: Ես շատ տպավորված եմ համալսարանի պատմությունից, բազմաթիվ այլընտրանքներից և գործունեության ոլորտներից»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ...

➤ 1 ռակոթյանը ներկայացրեց Հայ Եկեղեցու առաքելությունը հայ ժողովրդի կյանքում, պատմության ընթացքում դիմագրված փորձությունները և արդի մարտահրավերները:

Հայոց Հովվապետը գոհունակությամբ անդրադարձավ նաև Հայաստանյայց Առաքելական և Հռոմի Կաթոլիկ Եկեղեցիների եղբայրական փոխհարաբերություններին, ինչպես նաև Ֆրանցիսկոս Պապի՝ Հայաստան կատարելիք առաջիկա այցին: Այս առիթով Նորին Սրբությունը վերհիշեց 2015 թ. ապրիլի 12-ին Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով Հռոմի Քահանայապետի կողմից մատուցված Ա. Պատարագը՝ ընդգծելով, որ հայ ժողովուրդը մշտապես երախտագիտությամբ է հիշելու վերջինիս կողմից ցուցաբերված գորակցությունը:

Այս առիթով խոսք ասաց նաև պրոֆ. Սուրոմի Սաբուլը: Մեծ հարգանքով արտահայտվելով Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի անցած ճանապարհի մասին՝ նա փաստեց, որ իր և Պիտեր Պազմանի անվան համալսարանի ուսանողների համար չափազանց կարևոր է հայ ժողովրդի հոգևոր կենտրոնում գտնվել ու հաղորդակցվել Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ, ինչպես նաև մոտիկից ծանոթանալ հայ ժողովրդի նվիրական արժեքներին ու սրբություններին: Ռեկտորը նաև իր ուրախությունը հայտնեց երկու կրթօջախների միջև ձևավորված սերտ կապերի համար:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը հաճելի կեցություն մաղթեց ամենքին Հայաստանում: Ցավով արձանագրելով և դատապարտելով մարտի 22-ին Բելգիայում տեղի ունեցած սարսափելի ահաբեկչությունը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկաներին հրավիրեց համատեղ աղոթքի՝ հիշելու տարբեր երկրներում պատերազմական և ահաբեկչական գործողությունների հետևանքով զոհվածներին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի Արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը:

Մայր Աթոռի տեղեկատվական կենտրոն

Հանդիպում կաթոլիկ համալսարանի ռեկտորի հետ

Մանկավարժական համալսարանի մեծ դահլիճում տեղի ունեցավ Հունգարիայի Պազմանի կաթոլիկ համալսարանի ռեկտոր Սուրոմի Սաբուլի հանդիպումը բուհի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հետ: Հանդիպմանը ներկա էին ՀՀ ԿԳ նախարար Լևոն Սկրտչյանը և ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը:

«Ես շատ ուրախ եմ կաթոլիկ համալսարանի ռեկտոր Սուրոմի Սաբուլին պատվավոր դրկտորի դիպլոմ տալու համար, - ասաց ռեկտոր Ռ. Միրզախանյանը: - Նա միջազգային մեծ հեղինակություն և ճանաչում ունեցող գիտնական է. 44-ամյա գիտնականը չորս անգամ դրկտորական է պաշտպանել, նրա դասախոսություններին ծանոթ եմ աշխարհի ամենաառաջավոր համալսարաններում, 280 անգամ մասնակցել է միջազգային հեղինակավոր կոնֆերանսների»:

Ռուբեն Միրզախանյանն ասաց, որ անչափ տպավորիչ էր նրա դասախոսությունը Մանկավարժական համալսարանում, ընդգծեց Բուդապեշտի կաթոլիկ համալսարանի հետ համաձայնագրի ստորագրման կարևորությունը՝ հատկապես առանձնացնելով հայագիտության ամբիոնի ստեղծման հարցը կաթոլիկ համալսարանում՝ հույս հայտնելով, որ մեր համալսարանի վերոհիշյալ ուղղվածությամբ ամբիոնները իրենց մեծ աջակցությունն ու նպաստը կբերեն այդ հայրենամկեր գործին: Միաժամանակ ռեկտորն ընդգծեց, որ ստորագրված համաձայնագիրը ենթադրում է փոխադարձ մեծածավալ աշխատանք: Նա հյուրին հանձնեց պատվավոր դրկտորի դիպլոմն ու մաղթեց ամենայն բարին ու հաջողություն՝ բոլոր ձեռնարկներում:

Ելույթ ունեցավ նաև կաթոլիկ համալսարանի ռեկտորը. նա իր երախտիքի խոսքն ուղղեց համալսարանի ղեկավարությանը՝ հույս հայտնելով, որ հետագա համագործակցությունն ու ապագա ծրագրերի իրականացումը պայմանավորված է գործընկերների կայն շփումներով բուհական տարբեր ուղղություններով:



Ապա ներկաներին մեծ բավականություն պարգևեց Հայաստանի պետական կամերային նվագախումբը՝ միջազգային մրցույթների դափնեկիր մատերո Վահան Մարտիրոսյանի ղեկավարությամբ մատուցելով հետաքրքիր համերգային ծրագիր, ուր տեղ էին գտել հայ և օտարազգի կոմպոզիտորների ճանաչված ստեղծագործությունները: Ներկաները և հյուրը սիրով ունկնդրեցին Կոմիտասի, Գլազունովի, Արդիտիի, Էվվարդ Միրզոյանի ստեղծագործությունները նվագախմբի և անհատ կատարողների մատուցմամբ: Համերգը եզրափակվեց Բրամսի երկու հունգարական պարով:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ԿԲԱՑՎԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ

➤ 1 Ֆետր Սուրոմի Սաբուլը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար: «Համաձայնագիր պետք է լինի այն կամուրջը, որը պետք է միացնի ոչ միայն երկու համալսարանները, այլև երկու երկրները, որոնք բավականին բան ունեն իրարից սովորելու»,- ասաց Սուրոմի Սաբուլը: Նա վստահեցրեց, որ ժպտաղեն երիտասարդները շատ են և հնարավոր երկուստեք կազմակերպած կրթամշակութային ծրագրերի միջոցով համալսարանները կկարողանան անել այն, ինչը չեն կարողացել անել քաղաքական գործիչները:



Բուհ կատարած պաշտոնական այցի ընթացքում Սուրոմի Սաբուլը ՀՊՄՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների համար հանդես եկավ «Եկեղեցական օրենքների հայալեզու հավաքածուների ազդեցությունը համաշխարհային եկեղեցական օրենքների ձևավորման վրա» թեմայով բացառիկ դասախոսությամբ: Պրոֆեսորն անդրադարձավ այդ ոլորտում իր ուսումնասիրություններին՝ հանդգնելով հայտնելով, որ հայալեզու եկեղեցական կանոնները հիմք են հանդիսացել համաշխարհային եկեղեցական կանոնների համար:

Դասախոսության ընթացքում ներկաները հարցեր ուղղեցին բանախոսին՝ եկեղեցական պատմության իրարամերձ մի շարք փաստերի վերաբերյալ:

Սոնա ԱՐԱՍՅԱՆ

Ձևարկեցին կրթության ոլորտի հիմնախնդիրները

➤ 1 ման պատճառով մենք կորցնում ենք նաև մագիստրոսական կրթությունը և ողջ միասնական շքան»:

Նախարարը դպրոցների տնօրեններին կոչ արեց ունենալ անհատական զարգացման ծրագրեր՝ դրանցում ընդգրկելով գործունեության ձախողումներն ու հաջողությունները, ներկայացնել դրանցից բխող առաջարկներ և ակտիվ մասնակցություն ունենալ կրթության ազգային ծրագրի մշակման գործում:

Միության նախագահ, պատգամավոր Ռուզաննա Մուրադյանը նորանշանակ նախարարին ներկայացրեց «Դպրոց-կենտրոնների միության» անցած տարվա գործունեությունը, համագործակցության շրջանակը, աշխատանքային ուղղությունները՝ ընդգծելով,

որ գնալով աճում է միության կազմում ընդգրկված դպրոցների թիվը:

Ռուզաննա Մուրադյանը կարևորեց

նաև ավագ դպրոցների և Մանկավարժական համալսարանի հետ ամբիջական համագործակցությունը՝ նկատե-



լով, որ դա անհրաժեշտություն է և՛ բուհի, և՛ դպրոցների համար:

ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը, ներկայացնելով բուհի և Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի հետ եռամյա համագործակցության հաջող փորձը, վստահեցրեց, որ ծրագրերը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել կրթության զարգացման ազգային առանձնահատկությունները. «Պետք է ինտեգրվել միջազգային փորձին, բայց ոչ արտատպել, այլ բարձրացնել գործունեության որակը՝ հաշվի առնելով առաջավոր փորձը»:

Հանդիպման ընթացքում տնօրենները տարբեր հարցեր ուղղեցին նախարարին, որոնք հիմնականում առնչվում էին տնօրենների հավաստագրմանը, հոսքային ուսուցմանը, ուսուցիչներին տրամադրվող սոցիալական փաթեթներին և այլն:



«Ավարտական վկայականները ծառայեցնել ոչ միայն զբաղեցրած պաշտոններին, այլև հայրենիքին ու հասարակությանը»

ՀՀ քննչական կոմիտեի նախագահ, ՀՀ ՄԻՊ-ի պատմության և իրավագիտության ֆակուլտետի իրավագիտություն մասնագիտության մագիստրատուրայի որակավորման քննությունների հանձնաժողովի նախագահ Աղվան Հովսեփյանն ավարտական վկայականներ հանձնեց հեռակա համակարգի այս տարվա 20 շրջանավարտներին:

տոր Աղվան Հովսեփյանից: Ռուբեն Միրզախանյանը շրջանավարտներին ցանկացավ մասնագիտական հաջողություններ և հորդորեց երբևէ չմոռանալ այն բուհը, որն ավարտել են: Միանալով շնորհավորանքներին և բարեմաղթանքներին՝ պատմության և իրավագիտության ֆակուլտետի ղեկավար Հովհաննիսյանն էլ մտադրեց, որ



Շնորհավորելով շրջանավարտներին՝ Աղվան Հովսեփյանը նկատեց, որ ավարտական քննություններին նրանցից շատերի պատասխաններից իսկապես գոհ է եղել. «Տեսնելով տրված գիտելիքների անդրադարձը՝ մանկավարժը գոհ է մնում իր աշխատանքից. առավել գոհ կլինեմ, երբ կարողանաք ձեզ դրսևորել և օգնեք մարդկանց օրենքների ճիշտ կիրառման հարցում», - ասաց Աղվան Հովսեփյանը: Ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը շնորհավորելով մագիստրոս շրջանավարտներին՝ ընդգծեց, որ այս ավարտական վկայականն առավել պարտավորեցնող է, քանզի այն ստանում են իրավագիտության դոկ-

շրջանավարտներն ավարտական վկայականները ծառայեցնեն ոչ միայն զբաղեցրած պաշտոններին, այլև հայրենիքին ու հասարակությանը: Ուսանողները շնորհակալություն հայտնեցին բուհի ռեկտորին, որակավորման հանձնաժողովի նախագահին և անդամներին, ֆակուլտետի ղեկավարին՝ ուսումնառության համար լավ պայմաններ ստեղծելու, պրոֆեսորադասախոսական անձնակազմում առաջատար մասնագետներին ներգրավելու համար: Հարազատ կրթօջախին մաղթելով նոր ձեռքբերումներ և հաջողություններ՝ մագիստրոսները խոստացան անձնվիրաբար ծառայել ոլորտին: **Ս. ԱՐԱՍՅԱՆ**

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանն ընդունեց Բելառուսի Հանրապետության Սպորտի և տուրիզմի նախարարի տեղակալ Ալեքսանդր Դուբկովսկու գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով հյուրերին՝ ռեկտորը նկատեց՝ տևական ժամանակ է, որ բուհը սերտորեն համագործակցում է Բելառուսի պետական մանկավարժական համալսարանի հետ. համատեղ իրականացվում են դասախոսների փոխանակման ծրագրեր, իսկ վերջին տարիներին ուսանողները երկուստեք մասնակցում են նաև «Ամառային դպրոց» միջազգային ծրագրին:

Հանդիպման ընթացքում կողմերը խոսեցին հանրակրթական դպրոցներում շախմատը որպես պարտադիր դասավանդվող առարկա ներդնելու գործընթացի առանձնահատկությունների, ինչպես նաև բուհում գործող Շախմատի կրթական հետազոտությունների լաբորատորիայի մասին:

«Աշխարհի առաջատար կրթական հաստատությունների հետաքրքրությունն առաջացրած «Շախմատը դպրոցում» ծրագիրը հայկական կրթական բեռնըն է. բուհի լաբորատորիայի կոմպետենտ հոգեբաններն ու սոցիոլոգները տևական ժամանակ կատարում են լուրջ հետազոտություններ՝ պարզելու շախմատի ազդեցությունը սովորողների զարգացման և կրթական մյուս առարկաների վրա, իսկ առա-

Մանկավարժականում էր Բելառուսի Հանրապետության պատվիրակությունը.

Անհրաժեշտ են հետևողական քայլեր



ջատար միջազգային հանդեսներում տպագրվել են բազմաթիվ հոդվածներ», - նշեց ՀՀ ՄԻՊ ռեկտորն ու հավելեց՝ շախմատը մեր կրթական համակարգի հիմնական թիրախն է:

Բելառուսի Հանրապետության Սպորտի և տուրիզմի նախարարի տեղակալ Ալեքսանդր Դուբկովսկին շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ նկատեց, որ այցելությունը հանրակրթական մի քանի դպրոց, մասնակցությունը ուսումնական գործընթացին ստիպում են չթաքցնել իրենց հիացմունքը դասավանդման ընթացքի և դրանով հետաքրքրված աշակերտների վերաբերյալ:

Հայկական փորձի կիրառումը կնպաստի Բելառուսի Հանրապետությունում շախմատի ավելի մասսայականացմանը և զարգացմանը. «Շախմատի ներդրումը դպրոցում սոսկ մեթոդապես չպետք է լինի. հարցն առավել ընդգրկում է՝ մանկավարժություն, հոգեբանություն, սոցիոլոգիա:

Սա այն դեպքն է, երբ չարժեշտապել. անհրաժեշտ են հետևողական քայլեր՝ կադրերի պատրաստման և մյուս հարցերը կարգավորելու առնչությամբ: Մեր երեխաների առողջության, նրանց զարգացման համար շախմատն է գործընկերային հարաբերությունների և համագործակցության հիմքը. ձեր մասնագետների հետ հանդիպումները, խորհրդատվությունն ու օգնությունը կօգնեն այդ ամենի իրագործմանը»:

Հյուրերը Հայաստանի շախմատի կազմակերպիչի հիմնադիր-նախագահ, ՀՀ ՄԻՊ-ի Շախմատի և սպորտի ամբիոնի վարիչ, գրոսմայստեր Սմբատ Լալույանի ուղեկցությամբ այցելեցին Շախմատի կրթական հետազոտությունների լաբորատորիա, շախմատի լսարան՝ մասնագետների հետ զրուցելու և գործընթացին տեղում ծանոթանալու նպատակով:

Մարինա ԱՂԵԿՅԱՆ

«Հասարակագիտություն» նոր մասնագիտացում համալսարանում

Մանկավարժական համալսարանում մարտի 25-ին անցկացվեց «Հասարակագիտությունն առարկայի դասավանդման խնդիրները բուհում և դպրոցում» խորագրով հանրապետական գիտաժողով:

ՀՀ ՄԻՊ պատմության և իրավագիտության ֆակուլտետի ղեկավարների ակտիվ ջանքերով ու «Ժողովրդավարության և մարդու իրավունքի կրթությունը Հայաստանում» ծրագրի շրջանակներում ՄԱԿ-ի Ժողովրդավարության հիմնադրամի աջակցությամբ անցկացվող գիտաժողովին մասնակցում էին վերոհիշյալ առարկայի հիմնախնդիրներով մտահոգ ու շահագրգիռ ներկայացուցիչներ՝ դպրոցների տնօրեններ, ուսուցիչներ, դասախոսներ և ուսանողներ:

Բացման խոսքում ֆակուլտետի ղեկավար Էդգար Հովհաննիսյանն անդրադարձավ գիտաժողովի նպատակին, քննարկվելիք հիմնախնդիրներին ու կատարված աշխատանքին: Բուհի համահամալսարանական ամբիոնների հետ համատեղ, հենվելով ՀՀ ԿԳ նախարարության ռազմա-

վարության և հանրակրթական դպրոցի կրթական ծրագրի վրա, ֆակուլտետում սուղ ժամանակահատվածում մեծ աշխատանք է իրականացվել «Հասարակագիտություն» մասնագիտացման ուսումնական ծրագրի ստեղծման ուղղությամբ: Հատկապես փոխդե-

կան Հայկ Գրիգորյանի անմիջական մասնակցությամբ ու համակարգմամբ ստեղծված ուսումնական ծրագիրը բուհում կներդրվի այս տարվա սեպտեմբերից:

ՀՀ ԿԳ նախարարի տեղակալ Մանուկ Մկրտչյանը ամփոփ ներկայացրեց խնդրա-



նարկայի կարևորությունն ու էությունը:

«Մենք փորձեցինք կատարած աշխատանքներն ամփոփել այս գիտաժողովով, որը կունենա գիտագործնական նշանակություն ոչ միայն բուհում: Ներկա աշխատանքներին առաջին գիտական հողավածներով իրենց մասնակցությունը բերին նաև մագիստրոսները: Դա արվեց «Սիվիտաս» ՀԿ-ի գործուն աջակցությամբ» - ասաց փոխնախարարը: -Հասարակագիտությունը նորանկախ Հայաստանի ժամանակաշրջանի համար նոր առարկա է, նոր երևույթ: Բնագիտական առարկաները պատմական զարգացման արդյունքում դասական ձև են ստացել, ինչը չի կարելի ասել հասարակագիտական առարկաների մասին. այստեղ կան մի շարք դժվարություններ: Մասնավորապես հայագիտությունը և հասարակագիտությունը պետք է ենթադրեն ապագայից բխող հանգա-

Նոր մասնագիտացում...

➤ 3 մանքներ, ինչը չի կարելի ասել պատմություն, մաթեմատիկա, կենսաբանություն և այլ առարկաների վերաբերյալ, որովհետև վերը թվարկվածն այն առարկաներն են, որոնք չունեն մեթոդական հիմքեր:

«Հասարակագիտություն» առարկան մենք ուսումնասիրում ենք՝ հասկանալու համար հասարակական կյանքի որոշ օրինաչափություններ, որպեսզի նրանց հիման վրա եզրակացությունների հանգենք: Թեև ըստ որոշ պետական-հասարակական գործիչների թյուր կարծիքների՝ կան երկրներ, որոնց փորձը յուրացնելով մենք կարող ենք այլևս երջանիկ ապագա ունենալ»:

Մ. Մկրտչյանի կարծիքով՝ «արժեքային համակարգի տեսանկյունից անչափ կարևոր է հասարակագիտության հիմնախնդիրների էության ուսումնասիրումն ու խնդիրների բացահայտում-ձևակերպումը նոր ժամանակաշրջանում, հետագա ամելիքներն իմանալու համար»:

Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը գիտաժողովի մասնակիցներին ողջունեց և արդյունավետ աշխատանքային ընթացք մաղթեց: Պրոռեկտորը համոզված է, որ գիտաժողովում կքննարկվեն բոլոր վիճահարույց հիմնախնդիրները ոչ միայն առարկայի դասավանդման ուղղությամբ, այլև այն կոնֆլեկտածին հիմնահարցերը, որոնք այսօր գոյություն ունեն մեզ շրջապատող աշխարհում:

«Սոցիալիզացիան, անձ-հասարակություն հարաբերությունները, սոցիալական դիրքորոշումներ, արժեքների վերաբերյալ բոլոր իրավական, քաղաքագիտական, մարդաբանական խնդիրները պահանջում են նոր մոտեցումներ, և ես համոզված եմ՝ այս գիտաժողովին մասնակցող յուրաքանչյուր մտահոգ է փոխակերպվող ու փոփոխվող աշխարհի ու հասարակության զարգացումներով»,- ամփոփեց պրոռեկտորը:

Բացման ելույթով հանդես եկավ նաև ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՄԻԿՏԱՍ ԴԿ-ի գործադիր տնօրեն Ալեքսանդր Շագաֆյանը: Նա խոսեց դեռևս 2014 թվականից ՄԱԿ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրի աշխատանքների մասին՝ որպես թիրախ՝ շեշտը դնելով կրթության ոլորտի և մասնավորապես Մանկավարժական համալսարանում հասարակագիտություն նոր մասնագիտացման ներդրման համար տարված համատեղ աշխատանքի վրա:

«Մեր աշխատանքի արդյունքը հասարակագիտության մասնագիտական ծրագրի ստեղծումն էր. համալսարանն արեց առավելագույնը, և մենք սպասում են ծրագրի ներդրմանը, պատրաստ ենք շարունակել աջակցությունը»:

Գիտաժողովը շարունակվեց նիստերով, որտեղ ընթերցվեցին և քննարկվեցին հիմնախնդիրներ առաջ քաշող տարբեր զեկուցումներ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ



«Պատերազմը ոճրի ծրագիր է, ոճիրը՝ պատերազմի հետևանք»

Մանկավարժական համալսարանում «Զանգվածային հանցագործությունները երկու համաշխարհային պատերազմների ընթացքում. համեմատական քննություն» թեմայով դասախոսությամբ հանդես եկավ ԴԿ ՊԱԿ-ի արտասահմանյան անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ֆրանսիայի պատմաբան Ռայմոնդ Գևորգյանը: Նա անդրադարձավ 1-ին և 2-րդ համաշխարհային պատերազմների ժամանակ մարդկության դեմ իրականացված հանցագործություններին նշելով. «Ազգայնամուլական զաղափարները թուրքերը վերցրել են եվրոպայից՝ մինչև Հայոց ցեղասպանության կազմակերպումը: Երբ այն դարձավ գործողությունների իրականացված մոդել, նացիստական Գերմանիան ծրագրին իրականացրեց արդեն հրեաների դեմ», - նշեց պատմաբանն ու համեմատականներ անցկացրեց նաև վերջին ոճրագործությունների միջև:

Ռայմոնդ Գևորգյանն իր գիտական ուսումնասիրությունները կատարելիս համոզվել է, որ

բոլոր ժամանակներում ցեղասպանությունների համար հիմք են հանդիսացել պատերազմները. «Պատերազմը ոճրի ծրագիր է, ոճիրը՝ պատերազմի հետևանք»:

Ֆրանսիական պատմաբանը ևս մեկ անգամ հիշեցրեց՝ ՄԱԿ-ի կոնվենցիան՝ ցեղասպանություն է նաև հայրենազրկումը, մասսայական տեղահանությունը: «Մտավորական և հայկական սիյուռնի մերկայացուցիչ, որ մեծ դերակատարում ունի նաև Ֆրանսիայի հասարակական կյանքում: Նա տարիներ շարունակ ղեկավարել է Փարիզի Նուբարյան մատենադարանը, որտեղ կուտակված է հայկական մշակութային, հոգևոր ժառանգության հսկայական հատված», - հյուրին այսպես ներկայացրեց ԴԿ ՊԱԿ-ի համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռուբեն Սաֆրաստյանը: Պրոֆեսորը բարձր գնահատեց ֆրանսիական պատմաբանի գիտական գործունեությունն ու ժառանգությունը՝ ներկայներին ծանոթացնելով Ռայմոնդ Գևորգյանի

Հայոց ցեղասպանության վերաբերյալ 100 տարիների ընթացքում եղած աշխատություններն ամփոփող 1300 էջանոց գիրքը:

Ուսանողները պատմաբանին ուղղեցին մի շարք հարցեր. մասնավորապես այն հարցին, թե պե՞տք է շարունակել սպասել տարբեր երկրներից Ցեղասպանության ընդունմանը, Ռայմոնդ Գևորգյանը պատասխանեց. «Բացարձակ ոչ մի սպասելիք չկա միջազգային օղակներից. նրանց միջև տնտեսական և դիվանագիտական կապեր են, իսկ գիտական մակարդակներում

Հայոց ցեղասպանությունն ընդունելու հարցը փակ է: Միակ սկզբունքը սեփական մոտեցումներով հարցը լուծելու խնդիրն է: Հերթը հատուցմանն է, որի համար համակարգված պետք է պայքարեն պատմաբաններն ու իրավաբանները: Այս հարցը մեր հազվագյուտ խաղաքարտերից է և թուրքիայի տկար կողմը»:

Պատմաբանն անդրադարձավ նաև վերջին ժամանակների ահաբեկչություններին՝ նկատելով, որ իրականացնողների մեջ քիչ չեն նաև տեղացիները:

Պատմության և իրավագիտության ֆակուլտետի ղեկավար Էդգար Հովհաննիսյանը կարևորեց Ռայմոնդ Գևորգյանի դասախոսությունը ապագա պատմաբանների համար՝ նշելով, որ հետաքրքիր է լսել այլ տեսակետներ, համեմատական նոր վերլուծություններ: Նա հույս է հայտնեց, որ ֆրանսիական պատմաբանի՝ հայրենիք կատարած յուրաքանչյուր այց կնշանավորվի նաև Մանկավարժական համալսարանում նոր դասախոսությամբ:

Բրիտանիա ՄԵԼՈՆՅԱՆ

Միջազգային կազմակերպությունները հակամարտությունների կարգավորման գործիք

Մանկավարժական համալսարանի շրջանավարտ, Իսպանիայի Լա Կոռունայի համալսարանի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր Արտակ Մկրտչյանը պատմության և իրավագիտության ֆակուլտետում հանդես եկավ «Միջազգային կազմակերպությունները՝ որպես հակամարտությունների լուծման գործիք» թեմայով զեկուցումով:

Հետաքրքիր, ինտերակտիվ դասախոսությամբ բանախոսը պատմական էքսկուրս կատարեց և ներկայացրեց, թե ինպես, ինչ նպատակով ստեղծվեցին միջազգային բազմաթիվ կազմակերպություններ, որն է դրանց առաքելությունը, դրանք միմյանցից ինչով են տարբերվում և այլն: Արտակ Մկրտչյանը ընդգծեց, որ 20-րդ դարից սկսած իրավիճակն աշխարհում կտրուկ փոխվեց՝ պայմանավորված պետությունների թվի աճով. «Պետությունների միջև համագործակցության անհրաժեշտությունից դրդված՝ սկսեցին կազմակերպվել միջազգային կոնֆե-



րանսներ, սակայն այդ ձևաչափով քննարկումներն արդյունքի չէին հանգեցնում և չէին բավարարում պետություններին: Հենց այս անհրաժեշտությունից ելնելով՝ ստեղծվեցին միջազգային կազմակերպությունները, առանց որոնց այսօր մեր կյանքը հնարավոր չէ պատկերացնել»,- ընդգծեց դոկ-

տորը:

Բանախոսը ներկայացրեց միջազգային կազմակերպությունների բնութագիրը՝ միջպետական կազմ, պայմանագրային իրավական հիմք, մշտական և անկախ մարմիններ, իրավական ինքնություն, ապա անդրադարձավ դասակարգմանը՝ դրանք առանձնացնելով ըստ

նպատակների, կազմի և իրավասությունների:

Խոսելով հակամարտությունների լուծման գործում միջազգային կազմակերպությունների դերի մասին՝ Արտակ Մկրտչյանը նկատեց, որ անվտանգությանը վերաբերող հարցերը միշտ շատ կարևոր և դժվար են յուրաքանչյուր պետության համար. «Կան շատ պետություններ, որոնք չեն անդամակցում միջազգային կազմակերպություններին, սակայն, միջազգային հանրության մաս կազմելով, հարգում են տվյալ կազմակերպության օրենքները»:

Անդրադառնալով ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելությանը՝ բանախոսը նկատեց, որ այն պետք է տեղի ունենա հակամարտող կողմերի համաձայնության, անաշտության, ուժի կիրառման բացառման պայմաններում:

ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելությունը ներկայացնելիս՝ Արտակ Մկրտչյանը նկատեց, որ վերջին շրջանում կառույցը կարծես քիչ չի իրականացնում իր հիմ-

նական սկզբունքը՝ հաշվի առնելով ներկայումս աշխարհում տիրող իրավիճակը. «Յուրաքանչյուր պետություն նախ և առաջ պետք է վստահ լինի և ապավինի սեփական ուժերին»:

Ֆակուլտետի ղեկավար Էդգար Հովհաննիսյանը շնորհակալություն հայտնեց ֆակուլտետի շրջանավարտին՝ ֆակուլտետի զարգացման գործում իր ավանդն ու ներդրումն ունենալու համար: Անդրադառնալով դասախոսության թեմային՝ ղեկավարը նկատեց. «Այս թեման առավել քան վերաբերում է մեր երկրին և ժողովրդին, քանզի աշխարհում այսօր չլուծված էթնիկ խնդիրների շարքին է դասվում նաև Ղարաբաղյան հիմնախնդիրը, որի կարգավորման հետ կապված արդեն 20 տարի աշխատանքներ են տարվում»: Դեկանը ուրախությամբ նկատեց, որ համագործակցությունը կշարունակվի և արդեն կա նախնական պայմանավորվածություն, որպեսզի պաշտոնապես Մանկավարժական և Լա Կոռունայի համալսարանները համագործակցեն և իրականացնեն ուսանողների փոխամակային ծրագրեր: Իսկ այս դասախոսությունը համարեց առաջին հաջողված քայլը:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ



Մանկավարժական համալսարանի ռեկտորատի նիստերի դահլիճում մարտի 16-ին ջերմ ու անկեղծ մթնոլորտ էր առիթը Մաքսիմ Տիգրանի Մարգարյանի ծննդյան 80-ամյա հոբելյանն էր և գիտամանկավարժական գործունեության 55-ամյակը: Պետք է անկեղծությանը տուրք տալով ասել՝ միշտ չէ, որ հոբելյարի հասցեին հնչում են անկեղծ ու իրականությանը համապատասխանող խոսքեր: Այս անգամ հոբելյարին ուղղված ելույթները ոչ թե «հերթապահ» հնչեղանգով էին, այլ իրականության սահմաններում պարուրված ուսանողական տարիների հիշողություններով, ուր հետադարձ հայացքով հոբելյարը ներկայացվեց որպես լիդեր, մարդկային բարձր որակներով օժտված մարդ, հումանիստ, բարի և ոչ կոնֆլիկտային:

Շնորհավորական մաղթանքներն ու ելույթները ամբողջացրին Մաքսիմ Տիգրանիչ գիտնականի ու մարդու կերպարը, առանց որի անհնար է երևակայել հայրենական տնտեսագիտության ասպարեզը, և ում ավանդն ու ներդրումն այդ ոլորտում արդեն իսկ մարդկային մեծ նվաճում է:

ՎԱՍՏԱԿԱԾ ՀՈՒՆԵԼՅԱՆ

Համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը ռեկտորատի անունից մեծագույն հաճությամբ ու ջերմությամբ շնորհավորեց հոբելյարին, մաղթեց անենայն բարին և պարզևատրեց «Մանկավարժական համալսարան» մեղալով:

«Այն փառավոր ուղին, որ Դուք անցել եք, և այն գիտամանկավարժական գործունեությունը, որ իրականացրել եք տարիների ընթացքում Ձեր մարդկային բացառիկ որակների շնորհիվ, արժանի է մեծ գնահատանքի, - ասաց ռեկտորը: - Որտեղ եղել եք, կաք ու կլինեք, մարդիկ ավելի բարի են, միմյանց հասկացող, ոչ կոնֆլիկտային, որովհետև այդպիսին եք նաև դուք. դա մարդկային բացառիկ ունակություն է, որով քչերն են օժտված»:

ՀՊՄՀ տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ Կառլեն Խաչատրյանը հանգամանորեն ներկայացրեց հոբելյարի հարուստ ու հետաքրքիր կենսագրականը, անցած ճանապարհը, գիտական ուղին, Արցախում աշխատած տարիները, մասնագիտական ու մարդկային որակները, տնտեսագիտության ոլորտի զարգացման մեջ ունեցած դերն ու վաստակը և այդ վաստակի արգասիքը: «Գրեթե 55-ամյա մանկավարժական գործունեության ծնունդն է երիտասարդ և միջին սերնդի բարձրագույն որակավորման մասնա-

սարդ վարիչը՝ հիշեցնելով Մ. Մարգարյանի հումորային խոսքը, թե՛ «սա ոչ միայն 80-ամյակի վերջն է, այլ նոր 80-ի մեկնարկը», - ասաց ամբիոնի վարիչը:

Ուսանողական տարիների ջերմ ու նվիրական հիշողություններով էր շաղախված ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս, Ռադիկ Մարտիրոսյանի ելույթը: Նա հիշեց համալսարանի ուսանողական հանրակացարանում միասին անցկացրած տարիները՝ անդրադարձ անելով հոբելյարի և կուրսընկերոջ մարդկային, անձնային որակներին՝ ընկերասիրությանը, խստապահան-



զետների մի ստվար բանակ, որն այսօր իր գործուն մասնակցությունն է բերում կրթության, գիտության, կառավարման և տնտեսության ամենատարբեր բնագավառներում»:

«Ձեր կենսափորձով ու իմացությամբ մշտապես լինելու եք մեր կողքին, - ամփոփեց ամբիոնի երիտա-

ջությանը, առաջնորդելու ջիղին ու բանիմացությանը:

«Քեզմից շատ բան ենք սովորել, շնորհակալություն այն ամենի համար, որ տվել են մեզ քեզ հետ անցկացրած մեր կյանքի լավագույն ուսանողական տարիները», - ասաց Ռ. Մարտիրոսյանը:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Դարիբյանը, որ երկար տարիներ պաշտոնավարել է ԵՊՀ-ում, խոսեց հոբելյարի կյանքի գիտական տարբեր շրջանների մասին, հասարակական գործունեության, ապա Մանկավարժական համալսարանում միասին աշխատելու տարիների մասին:

«Շնորհակալ եմ, որ հանգամանքների բերումով, վերջին չորս տարիներին նորից աշխատում ենք միասին Մաքսիմ Տիգրանիչի հետ, բայց արդեն Մանկավարժական համալսարանում, իր ղեկավարած ամբիո-

նում... Արդեն քանի տարի ես գտնվում եմ նրա նուրբ ուշադրության ներքո և վայելում ընկերությունը», - ասաց Գ. Դարիբյանը:

Ինքնաբերական ու անբռնազբոսիկ ելույթները հաջորդում էին իրար: Դրանցից մեկն էլ ՀՊՄՀ քաղաքագիտության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ճանաչված քաղաքագետ Լևոն Շիրինյանի ելույթն էր. «Աշխատանքի բերումով 10 տարի է՝ ճանաչում եմ Մաքսիմ Տիգրանիչին՝ կայտառ հումորով, հումանիստ մարդուն, ով պատրաստ է ամեն ինչի: Իմ խորին համոզմամբ նա մեր նորագույն պատմության քաղաքականության և տնտեսագիտության ասպարեզի խորհրդանիշներից մեկն է, իսկ հումորը՝ նրա մարդկային հատկանիշների բարձրակետը»:

Մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի շնորհավորական ուղերձը հոբելյարին հղեց ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Լաուրա Ասատրյանը՝ ասելով. «Մտավորականի Ձեր կերպարը տարիներ շարունակ ուղեկցում է մեզ, երջանիկ է այն սերունդը, ով աշխատել և աշխատում է ձեզ հետ, քայլում դեպի կատարելություն տանող ձեր ճանապարհով:

Դուք Արցախից Ձեզ հետ Մանկավարժական համալսարան բերեցիք արցախցու մարտունակությունն

ու շունչը: Դասախոսի Ձեր կերպարը Մանկավարժական համալսարանում դարձավ օրինակելի երիտասարդության համար»:

Հոբելյարին շնորհավորեց նաև հոգեբան Նարինե Թովմասյանը:

Ապա հանդես եկավ հոբելյարը, ով ասաց. «Շնորհակալ եմ տարիների իմ վաստակը բարձր գնահատելու և հոբելյանը հաճելի տոնի վերածելու համար»:

Բոլոր ելույթները Մաքսիմ Մարգարյանի ապրած վաստակաշատ տարիներին նոր գույն ու բույր հաղորդեցին՝ փաստելով, որ մարդը իր գործով ու տեսակով է արժանանում ուշադրության, հարգանքի, համակրանքի ու սիրո: Հենց այդպիսին է Մաքսիմ Տիգրանի Մարգարյանը, ով սերունդների երթի ուղեկիցն է մարդու, մանկավարժի ու գիտնականի իր տեսակով:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ԸՊՄԸ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ ԱՌԱՋԻՆՆ Է

ՀՀ մշակույթի նախարարությունը և Հայաստանի Ազգային գրադարանը հրապարակել են «Հայաստանի գրադարանները (վիճակագրական վերլուծություն) 2014» գրքույկը, որտեղ ի մի են բերված հանրապետության գրադարանային համակարգի (հանրային, բուհական) 2014 թվականի աշխատանքային վիճակագրական տվյալները: Ներկայացված 17 բուհական գրադարանների շարքում է նաև Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական գրադարանը, որը, ի դեպ, հիմնգործող անգամ ա-



նընդմեջ գրադարանային հիմնական ցուցանիշներով բուհական և հասարակական գրա-

դարանների համակարգում առաջինն է: Գրադարանային ցուցանիշ-

ներով Մանկավարժականի գիտական գրադարանը առաջինն է նաև հանրապետության

հասարակական գրադարանների համակարգում և ընթերցողների թվով (6000) գիջում է միայն Ազգային գրադարանին:

Ըստ ՀՊՄՀ գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանի «Մանկավարժական համալսարանի գիտական գրադարանի հաջողությունները մեծամասամբ պայմանավորված են գրադարանային պայմանների բարելավմամբ՝ ֆակուլտետներում նոր ու ժամանակակից ընթերցարանների գործարկմամբ, տեխնիկական ժամանակակից միջոցների համալրմամբ, գրադարանում վերջին տարիներին անցկացվող միջոցառումներով, ինչպես նաև երկարացված աշխատակարգով»:

«Հայաստանի բազմակուսակ և տաղանդավոր գրողների մի ստվար մասը մեր համալսարանի շրջանավարտներ են՝ Արամայիս Սահակյան, Ռազմիկ Դավոյան, Հրանտ Մաթևոսյան, Սերո Խանգադյան...», անկեղծ հպարտությամբ իր ելույթն այսպես սկսեց բանասիրական ֆակուլտետի դեկան Յուրի Դավթյանը: Ըստ դեկանի՝ «Մարդը մարդ է ոչ միայն հողի վրա կանգնած, այլև իր մտքի թռիչքներով, իսկ մտքի թռիչքներով առանձնանում են գրողները»:

Պրոֆեսոր Յու. Դավթյանն իր ուրախությունն արտահայտեց «Գրական թերթի» աշխատակազմի աշխատանքային գործելաժողովի առթիվ, որը նպաստում է հանրապետությունում գրական կյանքի աշխուժացմանը:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Աելիտա Դուլուխանյանը, ով նաև «Գրական թերթի» խմբագրակազմի անդամ է, հիշեց դպրոցական և ուսանողական տարիներին գրողների հետ հանդիպումները և հավաստիացրեց՝ գրողի հետ հանդիպումը իսկական իրադարձություն է, հատկապես ապագա բանասերների համար:

«Գրական թերթի» աշխատակազմի հետ հանդիպումը հենց պրոֆեսոր, հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Աելիտա Դուլուխանյանի մտահղացումն էր, ով ապագա գրականագետ իր ուսանողներին կապել է թերթի հետ: Հետագայում հայացքով պրոֆեսորը հիշեց իր դասախոսին՝ Պարույր Սահակյանին, ով առաջին անգամ լսարան մտնելով հարցրել է, թե քանի ուսանող է կարդում «Գրական թերթ»։ Վերջինս էլ անկեղծ զարմանքով ու ակոսասանքով նկատել է, որ այդ թերթը կարդում է մեկ ուսանող:

Այսօր բանասիրական ֆա-



«Թերթը ծառայում է գրական մտածողության զարգացմանը»

կուլտետի ուսանողներից երկու տասնյակը բաժանորդագրվել է և կարդում է «Գրական թերթ», ծանոթանում գրական կյանքի անցողիկին, գրական նորություններին ու թարգմանական գրականությանը:

Պրոֆեսոր Դուլուխանյանը հավելու պատշաճի ներկայացրեց թերթի դերն ու առաքելությունը մերօրյա իրականության մեջ և սերնդակրթության գործում, հիշեց տարբեր տարիների խմբագիրներին, նաև Մանկավարժական համալսարանի երախտավորներից մեկին՝ Արշալույս Բաբայանին, ով թերթը խմբագրել է Հայրենական պատերազմի տարիներին:

Ա. Դուլուխանյանի կարծիքով Կարինե Խողիկյանը և Սամվել Կոսյանը սահմանափակ գրողներ չեն, աստվածատուր շնորհ ունեն, նրանց ստեղծագործությունները թարգմանվելու դեպքում մեծ ճանաչում կունենան: «Մենք ապրում ենք քաղաքական հեղափոխումների ժամանակաշրջանում, և թերթը

նրբորեն անդրադառնում է դրան», -ասաց ամբիոնի վարիչը՝ հաստատ համոզմունքով, որ թերթը մեր հասարակական կյանքում ազգային դաստիարակչական ուղղվածություն ու դերակատարություն ունի:

«Գրական թերթի» մասին իրենց խոսքն ասացին ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողներ Էդգար Ապրեսյանը և Մուշեղ Հարությունյանը:

«Շատ լավ է, որ գրական, քաղաքական, ընկերային դաշտում դուք բոլորը նայում եք նույն պատուհանից», - թերթի աշխատակազմին դիմեց պրոֆեսոր, «Սփյուռք» կենտրոնի ղեկավար, հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը: Նա առանձնացրեց խմբագիր Կարինե Խողիկյանի՝ հասարակության հոռի բարբերի ու երևույթների հանդեպ անջար բարությունն ու նրբին մեթոդիկայի, ճշմարտացի վերաբերմունքը հասարակական

տարբեր շերտերի հանդեպ և անկողմնակալ մոտեցումը, ապա ամփոփեց. «Թերթը ծառայում է մեր գրական մտածողության զարգացմանն ու ներքին խութերի հաղթահարմանը»:

Պրոֆեսորն, իհարկե, կուզեցներ, որ «Գրական թերթը» լիներ մեր գրական մտածողության սահմանագլուխը», որ նրա էջերում ավելի շատ լինեին գրական սկզբունքների բախումները, ավելի քիչ՝ սիրալիր գրախոսությունները, քննարկվեին սփյուռքի համակարգային խնդիրները: Պրոֆեսորը հավելեց, որ բանասիրական ֆակուլտետի ուսանողները խանդադատանքով են կարդում գրական թերթը և լավ կլիներ նրանք թերթում ունենային իրենց գրական պատուհանը:

Պրոֆեսոր Մարտին Գիլավյանի կարծիքով՝ թերթում քիչ են քննադատական հոդվածները և վաղուց ժամանակն է փակել խոտանի ճանապարհը:

Վերջում ելույթ ունեցավ թերթի խմբագիր, ծանաչված

արծակագիր, դրամատուրգ Կարինե Խողիկյանը: Նա ներկայացրեց աշխատակազմի՝ հանդիպմանը ներկա անդամներին՝ բանաստեղծական բաժնի պատասխանատու Սամվել Կոսյանին, գրական անցողարձը ներկայացնող Շաքեին և սրբագրիչ Ելենային, ապա անկեղծացավ, որ նման հանդիպումները զգաստացնող են և պարտավորեցնող:

Նա խոսեց ելույթներում առաջ քաշված նկատառումների մասին, ապա ամենայն լրջությամբ բարձրաձայնեց, որ այսօրվա գրական խոտանի դեմ պատնեշ կառուցողները պետք է լինեն գրականագետները:

Նա նաև իր երախտիքի խոսքն ասաց ուսանողների և թերթի կապի մասին՝ հավելելով՝ «մեր դուռը բաց է ուսանողների առաջ»:

ՌԳԸ, «Գրական թերթի» աշխատակազմի ու հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնին կից «Գրական թերթի» ակունքի անդամների հանդիպումն ավարտվեց հետագա համագործակցության և առավել սերտ բարեկամության ակնկալիքով:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՆՈՐ ԳԻՐՔ

Ընթերցողի սեղանին է պրոֆեսոր Աելիտա Դուլուխանյանի «Ալիսիա Կիրակոսյանի քնարերգությունը» գիրքը: Հեղինակն այն նվիրել է բանաստեղծուհու ծննդյան 80-ամյակին:

Գիրքը տպագրության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհուրդը, խմբագիրը բանասիրական գիտությունների դոկտոր Նորայր Աղայանն է:

«Ձանգակ» իրատարակչության կողմից 2016 թվականին տպագրված գիրքը իսկական անակնկալ է Ալիսիա Կիրակոսյանի պոեզիայի սիրահարների համար:

«Գիրքն առաջին ամբողջական ուսումնասիրությունն է հայերենով, ռուսերեն հավելվածով՝ նվիրված մեր ժամանակների նշանավոր բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոսյանի ստեղծագործությանը: Այն հասցեագրված է գրականագետներին, պոեզիայի աշխարհը պաշտող ուսանողությանը, ընթերցողական լայն լսարանին», -գրված է գրքի ներածական մասում:

«Հետազոտման մեջ հիմնականում զուգահեռներ են տարված բանաստեղծուհու և հայ գրականության մեծերի քերթությունների միջև: Ալիսիա Կիրակոսյանի բանաստեղծական հրաշքը ծնվել է հայկական գեմից՝ իր մեջ ներառելով համաշխարհային գրականության և մշակույթի ակնառու երևույթներն ու նվաճումները, -գրում է Ա. Դուլուխանյանը: Բանաստեղծուհին ծայնակցում է աշխարհի նշանավոր գրողներին՝ անցյալի, ներկայի և, համոզված ենք, ապագայի: Այս երևույթը սոսկ նրա կրած ազդեցությունների ոլորտում դիտարկելը պարզունակություն կլիներ, մեծերը հաճախ կրկնում են իրար, միմյանցից անկախ և այնքան նորովի՝ հենց սրա մեջ է նրանց անզուգականության գաղտնիքը»:



Շանդիպում Արևշատ Ավագյանի հետ

Բանասիրական ֆակուլտետի «Սփյուռք» կենտրոնը մարտի 23-ին կազմակերպել էր հանդիպում հայ կերպարվեստի և գրականության ասպարեզում մեծ ճանաչում ունեցող մտավորականի՝ Արևշատ Ավագյանի հետ:

Ելույթները ամբողջացրին արվեստագետ մտավորականի կերպարը. «Արարչագործ Ավագյանը մեզ տանում է դեպի լույսը: Նրա գիրքը արդեն կար, իսկ բանաստեղծական ծին իր թռիչքն էր սկսել: Նրա ծին սարահարթով վարզում էր քամուց էլ արագ...»:

Հանդիպմանը ներկա էին Արսեն Դամբարյանը, Ռազմիկ Գալստյանը, Ռոմա Դալլաքյանը, Ալբերտ Հովհաննիսյանը:

Բանասիրական ֆակուլտետի ուսանողները ներկայացրին Արևշատ Ավագյանի բանաստեղծությունները, իսկ 4-րդ կուրսի ուսանողուհի Աննա Սարգսյանի զեկուցումը հիացրեց հյուրին: Հայ նորագույն գրականու-

յան և նրա դասավանդման ամբիոնի վարիչի խորհրդանշական հարցին, թե՛ «Երբ են դառնում բանաստեղծ», Ավագյանը պատասխանեց. «Բանաստեղծ են դառնում այն ժամանակ, երբ սարսուռն արդեն անցնում է մաշկի տակով»:

Ապագա բանասերներիս հանդիպումը շատ բան սովորեցրեց, իսկ ամենակարևորը՝ մենք հասկացանք, որ Արևշատ Ավագյան բանաստեղծի մարմնով «սարսուռն է հոսում և ծլարծակում»:

ԱՆՈՂ ՂԱԼԱՀՅԱՆ





Մեր ուսանողը՝ Հայոց բանակում

ԳՆԱՀԱՏԵԼՈՎ ԿՅԱՆՔԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱԿՆԹԱՐՔԸ

նության ուսուցչունի ասում էր. «Ինչի՞ վրա ես հույս դրել, պարապիր, որ համալսարանն ընդունվես...»

Հարցին՝ ինչպե՞ս էր պատկերացնում ծառայությունը, և ի՞նչ տեսավ նա իրականում, Երվանդը պատասխանեց.

խիստ տարբեր ու հակասական են լինում: Ինչպես ասում են՝ լավ է մի անգամ տեսնես, քան 100 անգամ լսես: Ավարտեցի առաջին կուրսն ու զորակոչվեցի բանակ:

Երվանդի կարծիքով՝ բանակը հնարավորություն է ընձեռում զննատեսչի կյանքի յուրաքանչյուր ակնթարթը, սովորեցնում շատ հարցերի այլ տեսանկյունից նայել և ճանաչել մարդկանց, իսկական ընկերներից:

դել ծառայության հիմնական ժամանակը, մի քանի ամիս ևս, ու արդեն տանը կլինի... Բայց արդեն ծրագրել է քաղաքացիական կյանքում իր անելիքը:

Եվ ահա կրտսեր սերժանտի մաղթանքը.

- Հորդորում եմ, որ գինվորները ինքնամայատակ օր չնքնեցնեն, այլ լավ տիրապետեն գինվորական մասնագիտությանը, որովհետև տղամարդը գինվոր է ամբողջ կյանքի համար՝ մինչև կյանքի վերջը: Հորդորում եմ՝ կռիվեն, ինքնակրթվեն և զարգանան թե՛ մարմնով, թե՛ հոգեպես: Եվ իհարկե՛ իրար սիրեն ու օգնեն:

Լևոն ՓԱՆՈՍՅԱՆ «Հայ Չինվոր»



Ներկայացրին Սուրբ Հարության քրոնի խորհուրդը

«Չորսու, գատիկ, մայրություն» խորագրով ներկայացմամբ Մանկավարժական համալսարանում հանդես եկան «Փրկություն» հասարակական կազմակերպության ասաները:

Մանկավարժական համալսարանի Հատուկ կրթության ֆակուլտետի ուսանողները ևս մասնակցում էին ներկայացմանը:

Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Ռոբերտ Ազարյանը ցավով արձանագրեց, որ դեռևս ծնվում են մտավոր տարբեր համախտանիշ ունեցող անձինք, սակայն նման ձեռնարկներով հասարակությունը և հատկապես Մանկավարժական համալսարանը փորձում են թեթևացնել նմանատիպ մարդկանց հոգսն ու նրանց հասարակության լիիրավ անդամ դարձնել:

«Այս ներկայացմամբ դուք հասկացաք, թե ինչի է առհասարակ ընդունակ մտավոր հետամնացություն ունեցող մարդը, երբ ցանկություն կա նրա հետ աշխատելու: Այսօր մենք ուզում ենք ևս մեկ անգամ ցույց տալ, որ այս մարդկանց պետք է նայել հավասարի աչքերով», - մեզ «Փրկություն» ՀԿ-ի տնօրեն Արվինե Աբրահամյանը: Նա հատուկ շնորհակալություն հայտնեց Մանկավարժական համալսարանին ոչ միայն լավ մարդիկ կրթելու, այլև լավ մասնագետներ պատրաստելու համար, ովքեր աշխատում են կենտրոնի շահառուների հետ:

«Փրկություն» հասարակական կազմակերպության այցերը Մանկավարժական համալսարան արդեն ավանդույթ են դարձել, համարվելով բուհի գործատու՝ հատուկ կրթության ֆակուլտետի ուսանողներից ու մանր իրենց շարունակման և մանկավարժական պրակտիկան ևս անցկացնում են այդ հասարակական կազմակերպությունում:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Մեր գոյության հավերժության գաղտնիքը



ՀԳՄՀ հայոց պատմության ամբիոնի դասախոս պ.գ.թ., դոցենտ Արմինե Եփրիկյանը մարտի 19-ին պրակտիկայի շրջանակներում կազմակերպել էր ուխտագնացություն դեպի Եջմիածին:

Մարտի 19-ին, ժամը 09:00-17:00: Հասցեն՝ Եջմիածին, Կենտրոնական փողոցի համար 2-ը: Հարցումները՝ 09:00-17:00: Դասընթացներն անցկացվում են բուհի բոլոր մասնագիտությունների համար նախատեսված ընդունելության առարկայական ծրագրերով առկա և հեռակա կրթական համակարգեր ղեկավարողների համար:

Արագացված (երկամսյա) դասընթացներն անցկացվում են տվյալ ուսումնական տարվա ապրիլ-մայիս ամիսների ընթացքում: Գիմումները ընդունվում են սեպտեմբերի 1-30-ը՝ ժամը 09:00-17:00:

100 ծառ՝ դպրոցի պարածքում

Մանկավարժական համալսարանի կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի նախաձեռնությամբ Լևոն Արիսյանի անվան N 127 դպրոցի հարակից տարածքում իրականացվեց ծառատուն: Ֆակուլտետին աջակցել էին «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը (Armenia Tree Project), դպրոցի աշխատակազմն ու աշակերտները:

Ֆակուլտետի դեկան Ռուզաննա Սադոյանը մեզ, որ մինչ այդ ուսումնասիրել էին տեղանքը և կատարել տեղաձևման աշխատանքներ: «Նման ձեռնարկները նպատակ ունեն ավելի ամրապնդել բուհ-դպրոց համագործակցությունը, նպաստել էկոլոգիական դաստիարակության ձևավորմանն ու ամրապնդմանը: Սա պարզապես ծառատունն չէ, աշակերտներից յուրաքանչյուրը պատասխանատվություն կկրի իր տնկած ծառի նկատմամբ և այն կխնամի», - ընդգծեց դեկանը՝ հավելելով, որ այս ձեռնարկները կաջակցեն նաև ուսանողներին՝ հետազոտական աշխատանքներ իրականացնելիս:

Նախատեսվում է ծ առ ա տ ու ն կ եր ը դարձնել շարունակական և ընդլայնել աշխարհագրությունը՝ ներառելով նաև ՀՀ մարզեր:



Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԴԻՍՈՐԴՆԵՐԻ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը 2016-2017 ուսումնական տարվա դիմորդների համար կազմակերպում է նախապատրաստական դասընթացներ

- Երկարաժամկետ (ութամսյա)
■ Արագացված (երկամսյա)
Երկարաժամկետ (ութամսյա) նախապատրաստական դասընթացները կազմակերպվում են տվյալ ուսումնական տարվա հոկտեմբեր-մայիս ամիսների ընթացքում: Գիմումները ընդունվում են սեպտեմբերի 1-30-ը՝ ժամը 09:00-17:00: Դասընթացներն անցկացվում են բուհի բոլոր մասնագիտությունների համար նախատեսված ընդունելության առարկայական ծրագրերով առկա և հեռակա կրթական համակարգեր ղեկավարողների համար:

Արագացված (երկամսյա) դասընթացներն անցկացվում են տվյալ ուսումնական տարվա ապրիլ-մայիս ամիսների ընթացքում: Գիմումները ընդունվում են սեպտեմբերի 1-30-ը՝ ժամը 09:00-17:00:

Նախապատրաստական բաժնի ունկնդիր ձևակերպելու համար դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

- 1) անձը հաստատող փաստաթուղթ,
2) 2 լուսանկար՝ 3x4 չափի,
3) ուսման սահմանված վարձի վճարման վերաբերյալ անդորրագիր:
Ծանոթություն: Նախապատրաստական դասընթացներն ավարտած դիմորդները հեռակա ուսուցման համակարգ կարող են դիմել դասընթացի ավարտական քննությունների զննատեսականներով՝ ըստ մասնագիտությունների՝ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված տեղերի մինչև 20 %-ի չափով: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել նախապատրաստական բաժնի: Հասցե՝ Տիգրան Մեծի 17, վարչական մասնաշենք, 2-րդ հարկ, 216 սենյակ Հեռախոս՝ 59-70-94, էլեկտրոնային փոստի հասցե՝ prepdep@aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՐՅԱՆ Ելադրուձը՝ Պետրոս ՎԱՐՂԱՆՅԱՆԻ Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՐՅԱՆ Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ. Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97: Ել. փոստ՝ asryansilva@gmail.com Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը: Հասցեն՝ Արշակունյաց 2 Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է: Թերթը չի վաճառվում: Հանձնված է տպագրության 30.03. 2016 թ.